

Մրցույթ՝ Երևանի «Ալ. Բոլկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

Դասվարի (ռուսերենով ուսուցմամբ դասարաններ) – 18 դասաժամ, ռուսաց լեզվի (ռուսերենով ուսուցմամբ դասարաններ) – 8 դասաժամ, աշխարհագրության (ռուսերենով ուսուցմամբ դասարաններ) – 12 դասաժամ, պատմության (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ դասարաններ) – 25 դասաժամ, ֆիզկուլտուրայի – (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ դասարաններ) – 25 դասաժամ, երաժշտության (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ տարրական դասարաններ) – 21 դասաժամ, տեխնոլոգիայի (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ տարրական դասարաններ) – 4 դասաժամ, կերպարվեստի (ռուսերենով և հայերենով ուսուցմամբ դասարաններ) – 19 դասաժամ ուսուցիչների թափուր տեղերի համար:

Կից ներկայացվում է հայտարարության տեքստը:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են 24.10.2023թ.-ից մինչև 06.11.2023թ.-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 11:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից: Մրցույթը տեղի կունենա **2023թ. նոյեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին**, Երևանի «Ալ. Բոլկի անվան հ.122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք. Երևան, Արզումանյան - 5: Տեղեկությունների համար զանգահարել (010) 39 – 10 – 80 հեռախոսահամարով: